իրանց գլխաւորի հետ: Նա գործունեայ մարդու յատուկ աչալրջութեամբ մօտեցաւ կարասներին, նայեց նոր ներկած կտաւներին ու շալերին, մի քանի բանէր հարցրեց, մի քանի պատուերներ տուեց եւ հեռացաւ: Նրա մի հայեացքը բաւական էր գիտենալու համար, թէ որտեղ ի՞նչ էր պակաս, եւ որտեղ ի՞նչ պէտք էր անել: Յետոյ նա դարձաւ դէպի յաճախորդները. մօտենում էր ամէն մէկին, բարեւում էր, հարցնում էր նրանց առողջութիւնը, հետաքրքրւում էր նրանց դրութեամբ, թէ ինչպէ՞ս է հացի բերքը, առո՞ղջ են նրանց անասունները, առողջե՞ն նրանց հայրը, մայրը, կանայք, զաւակները եւ այլն: Բոլորի անունները գիտէր, բոլորի մասին հարցմունքներ էր անում:

Ինչ որ աւելի աչքի էր զարկում, այդ էր՝ յաճախորդների չափազանց ընտանիութիւնը թէ՛ վարպետ Փանոսի եւ թէ՛ նրա տան հետ: Մի քուրդ մօտեցաւ նրա մօրը խնդրեց, որ իր անթարիի պատռած թեւքը կարել տայ: Մի այլ քուրդ մի զոյգ կենդանի կաքաւներ էր բերել վարպետի փոքրիկ երեխաների համար: Ես զարմանում էի, ի՞նչ էր պատճառը, այդ մարդը, որ գիշերը Ասլանի հետ այնքան դառնութեամբ էր խօսում քուրդերի մասին, այժմ այդպէս բարեկամաբար ողջագուրում էր նրանց: Միթէ՞ դա մի տեսակ կեղծաւորութիւն էր նրա կողմից, միթէ՞ շահեկան նպատակները ստիպում էին նրան շողոքորթել իր յաճախորդներին: Ոչ, վարպետ Փանոսը ոչ կեղծաւոր եւ ոչ շահասէր մարդ էր: Նա առհասարակ սիրում էր բարեկամական յարաբերութիւններ պահպանել ամէն տեսակ մարդկանց հետ, մանաւանդ գիւղացիների հետ:

Վարպետ Փանոսի տունը մի տեսակ հիւրանոց էր այդ ամէն կողմից եկած, խառնիճաղանջ բազմութեան համար: Ես նրա գործարանը համեմատում էի իմ քեռին երի զինագործութեան գործարանի հետ: Բայց այնտեղ բոլորովին ուրիշ բան էր. այնտեղ գլխաւորապէս դեր էր խաղում շահը: Յաճախորդներից ոմանք, որոնք հեռու տեղերից էին եկած, իրանց գրաստները կապել էին վարպետի ախոռատանը. այնտեղ նրանց համար թէ՛ սնունդ եւ թէ՛ խնամք պակաս չէր: Գրաստների տէրերը իրանք եւս գիշերում էին ախոռատանը կից առանձին բնակարանում եւ վարպետի խոհարանից կերակուր էին ստանում: Ոմանք իրանց գիւղերից բերած մթերքները տեղաւորել էին նրա տանը. այստեղից տանում էին բազարը, վաճառում էին եւ փոխարէնը ինչ-որ գնելիք ունէին, առնում էին ու բերում, նոյնպէս դնում էին նրա տանը: Կարծես այստեղ մի տեսակ մթերանոց լինէր նրանց համար: Նրանք այնքան ժամանակ հիւրասիրութիւն էին վայելում, մինչեւ գործները վերջացնում էին, յետոյ շնորհակալութեամբ գնում էին իրանց տեղերը: